

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

ՔԱՂՈՒՆԻՔ Ի ԿՈՆՏԱՆՍՏԱՆՍ ՎԵՅՍՈՒՆ ԿԵՐԵՊԵՏԻ.

Մ ԿՐՏԻՉ ԺԱՌԱՅ . . . ՇՆՈՐՀԱԶԱՐԻ Տ. ԳՈՐԵԳԻՆ ՎՍՐԵԱՊԵՏԻ . . . ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ  
ՅԱՅՏ ԱՌՆԵՄԲ՝

Եթէ Տ. Կարապետ վարդապետ Տեսուչ Հողեր Ղեմարանի  
Ժառանգաւորաց Մայր Եթողոյ որ ի 1897 ամէ մինչև ցայսօր ժա-  
մանակի արժանապէս և մեծաւ հմտութեամբ վարէր զգժուարին  
պաշտօն խմբագրութեան «Արարատ» ամսագրի՝ հրատարի զարդիս  
առ զգժուարութեան պաշտաման տեսչութեանն: Արդ մեր զթախան-  
ձանս նորին հաճեալ և զհրատարականն ընկալեալ՝ կարգեմք զՔեզ  
ի պաշտաման խմբագրութեան ամսագրի Հայրապետութեան Մերոյ:

Առ այս կարևոր համարիմք տալ Քեզ զայստակ հրահանգս յա-  
ռաջնորդութիւն պաշտամանդ: Նախ՝ ջանալ մատչելի կացուցանել  
Վրարատն զիւղական քահանայից մերոց և հասարակութեան օգ-  
տակար և պիտանի յօղուածովք՝ կրօնական, բարոյական, կրթական,  
գիւղատնտեսական, առողջապահական և այլ բազմազան բովանդա-  
կութեամբ: Արկրորդ ջան ի գործ զնել զօրացուցանել ըստ կոչման  
ամսագրին Մ. Եթողոյս զգիտական, զպատմական, զմատենագրական,  
զճնախօսական բաժինն առ ի բարձրացուցանել զբարի անուն և զգի-  
տական համբաւ միաբանութեան սուրբ Աջմիածնի: Արրորդ՝ թոյլ տամք  
Քեզ առ ի խրախոյս աշխատակցաց բանասիրաց՝ տալ նոցա ըստ  
ցանկութեան իւրեանց զարտատպութիւն յօղուածոցն առանձին  
տետրակօք: Եթէ առաւել իցեն յօղուածքն քան զմի թերթ տպա-  
գրական: Չորրորդ՝ յանձն առնեմք Քեզ խորհրդակցութեամբ ընդ  
բարձր Տ. Նախագահի Տպարանական ժողովոյն կարգել զմի ոմն  
յանդամոց տպարանական ժողովոյն անօրինել ըստ հաճութեան Չե-  
րում՝ զտպագրութիւն և զայլ պիտոյս հրատարակութեան ամսագրին  
Մերոյ՝ իսկ զնշանակելն սրբազրչին թողումք ի կամս Քո՛ր զորմէ և  
յայտարարեսցես Մեզ:

Հայրապետական հրամանք.

Կոնդակ յանուն Տ. Գրիգոր եպիսկոպոսի Գառնակերեան յաղագս ձեռնադրելոյ ի քահանայ զհնգեօին ընծայացուս. թ. 1420:

— Եանուն փոխ. թեմակալին Երեանայ Տ. Սուքիաս արքեպս. ի որով յայնեցաւ կարգումն Միքայէլ վրդ. ի ի վանահայր Անուոյ. թ. 1429:

— Եանուն նախագահի և հոգարարձութեան գպրանոցին Երեանայ, որով կարգի Գրիգորն վանցեան ուսուցիչ թեմ. գպրանոցին ի տեղի Եովհաննու Մուսարեգեան. թ. 1430:

— Եանուն Կոնստանտինոպոլիսի Հայոց Եամախոյ, որով յայնի վարդապետ Արսէն վրդ. ի ի գործակալ եկեղեցեաց Բաղու քաղաքի. թ. 1437:

— Եանուն Հոգարարձութեան թեմ. գպրանոցին Արցախու, որով հաստատեցան անդամք հոգարարձութեան Զաւատ րեզ Ոչխանեանց, Գրիգոր Բալանթարեանց և Սարգիս Ուղարշեանց. թ. 1456:

— Եանուն Սինօզի, որով առաքեցան Բենդայք թուով եօթն. հինգն մի մի հազար րուր. և մին երեք հարիւր և միսն մի հարիւր, նուիրեալք ի Մեծ. եղբորց Ժամհարեանց վասն Գեորգեան Ժառանգաւորաց Ծեմարանի. թ. 1465:

— Եանուն Կոնստ. Եուշուայ, ի յանդիմանութիւն՝ յաղագս անուշաղիւր վինելոյ նորա ի թոյլառութիւն պսակաց, որք բազում անգամ կատարին ի վերայ անշափահասից. թ. 1471:

— Եանուն Սինօզի սրբոյ Էջմիածնի, որով պատուիրի անպայման թոյլատրել զպրսակս յեօթներորդում աստիճանի ազգականութեան. թ. 1490:

— Եանուն Տիկին Տիրուհւոյ Պոպովեան և բժիշկ Ոսահակայ Ալաջալեան, ընդ որում վերադարձուցաւ յատակադիճն շինութեան գերեզմանի Մարգարայ Պապով. թ. 1493:

— Եանուն քահանայից և ժողովրդեան ոմանց զիւզօրեից Գարալազեազու յաղագս նպաստելոյ վանահօր վանուց Գնդիվազու՝ Տ. Մամբրէ արեղայի. թ. 1494:

— Եանուն Սինօզի ս. Էջմիածնի, որով յայնի հաստատութիւն Տ. Նսայի արքեպս. ի թեմակալ Եամախոյ և Տ. Մակար եպս. ի յանգամ սինօզի. թ. 1512:

— Եանուն վանական կառավարութեան, որով պատուիրի տալ Խաչիկ վրդ. ի զ300 ոսկի մնացորդաց Բոճկի նորին. թ. 1514:

— Եանուն Սինօզի ս. Էջմիածնի, որով յայնեցաւ կարգումն Տ. Եղիշէ վրդ. ի Ա. հարանեան յանգամ վանական կառավարութեան Մ. Աթոռոյ ընդ Համազասպ և Ղեռնդ վարդապետաց. թ. 1519:

— Եանուն Ժողովրդեան Ալէքսանդրապօլու յաղագս նպաստելոյ արկածելոց զիւզօրեիցն Ախալքալաքի. թ. 1551:

— Եանուն փոխ. Ալէքսանդրապօլու Տ. Մատթէոս վրդ. ի յաղագս հանգանակելոյ վիճաւոր նուէրս յանուն արկածելոց Ախալքալաքի և գնալոյ առ տեղեաւն և տալոյ տեղեկութիւն վեհափառին. թ. 1552:

— Եանուն Առաջնորդին Պարսկաստանի և Հնդկաստանի, որով տուան նմա ինչ ինչ հրահանգք յաղագս պաշտաման իւրոյ. թ. 1555:

Հայրապետական պարզուք

— Ենտրեցան կոնդակք հայրապետականք յաղագս կրելոյ զքահանայական լանջախաչ յանուն Գրիգոր քհ. Տ. Կարապետեան Եերեքին Տարղաւու գեղջի, Գարրիէլ ա. քահանայի Խաչի Խանչեան Ս. Խաչ եկեղեցոյ Ուսկիտարի (ի Պօլիս), Գարեգին ա. քահանայի Երամեան Ռոտոթթոյ քաղաքի, Մամբրէ քհ. Բիրաղեան ի նմին քաղաքի. թ. 1532, 1557—9:

Կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն Տ. Եղիա վրդ. ի Հասան—Ջալալեան. թ. 1525:

— Եաղագս սե ծաղկեայ փիլոնի յանուն Ղուկաս վրդ. ի Եղիազարեան և Մատթէոս վրդ. ի Ալոյեան յԵրնջակ. թ. 1526, 1543:

Արժանացողք հայրապետական զոհոնակութեան եւ օրհնութեան

Կոնդակ օրհնութեան յանուն Տեալի Լազարեան Ծեմարանի ուսուցչապետ Գրիգորի

Խալաթեան՝ յաղագս հրատարակութեան զգիր ըս Մնացորդաց. թ. 1506:


— Օրհնութեան և շնորհակալութեան յանուն Պատրիարքին Նրուսաղիմայ Տ. Յարութիւն Ս. արքեպս. -ի և միաբանութեան՝ վասն յառաջիկայ 1900 ամի. թ. 1507:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն ուսուցչապետաց Օսկար Փլայկեր և Ռիլարդ Շմիտզ Գերմանացոց ի Բերլին՝ յաղագս ուսուցանելոյ Տ. Կովտաս վրդ. -ի զարուեստ երաժշտութեան. թ. 1508--9:

— Օրհնութեան յանուն Տիկին Մարգարտի Մ. Չիրնեանց Ն. Նախիջևանցոյ յաղագս մի հարիւր ր. նուիրարբերութեան Մ. Աթոռոյ. թ. 1517:

Շնորհաւորութիւն.

Կոնդակ շնորհաւորական յանուն Աղէքսանդրի Եովսէփեան Բիշմիշեանց յաղագս ստանալոյ նորա զԱ. աստիճան շքանշանի Ս. Ստանիսլաւի. թ. 1518:



ԿՐՕՆԱԿԱՆ

Ս. ՅԱՅՏՆՈՒԹՐԻՆ.

Անաստիկ աւեսարանեմ մեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի անկնայն ժողովրդեանն. զի ծնաւ մեզ այսօր Փրկիչս որ Կ օճեալ Տեր ի Բաղասի Դարբի: Եւ այս նշանակ մեզ. գտանիցիք մանուկ պատեալ ի խանութարսու և եղևալ ի մտար:

Ղուկ. Բ. 10—12:



ՅԱՅՏՆՈՒԹՐԵԱՆ զիշերս հրաշայլի զիշեր... Ահա կրկին խաւարի մէջ ծագում է Տիրոջ փառքի լոյսը և հրեշտակային մի ձայն աւետում ամբողջ աշխարհին այն ուրախութիւնը որ քրիստոնէական յայտնութեան առաջին զիշերը Բեթղեհէմի հովիւներին բերաւ: Դ՛նչ զիշեր էր այդ—Սրբ

մենք ցուրտ ձմրան երեսից փախած մի տաք անկիւն ենք որոնում ապահով յարկի տակ իսկ դուրսը բուք է ու սառնամանիք՝ զըժուար կարող ենք հասկանալ որ այդպիսի մի զիշեր բացօթեայ հովիւներ են եղել բաց երկնքի տակ մակաղած հօտեր: ստեղծ այնտեղ դէպի հարաւ՝ Բեթղեհէմի լեռներում թղենիներն ու ձիթենիների աշխարհում սառնամանիք չկայ: Նրախ մի ցուրտ ու պարզրկայ զիշեր էր այն. դուցէ ջերմանալու և իրենց ընթրիքը պատրաստելու համար մի փոքրիկ խարոյկ ևս վառել էին հովիւները որ արգէն մարիլու մօտ էր. նիրհում էր հօտը. շուրջը արող հանդիսաւոր լութեան մէջ մօտիկ առուակի ներդաշնակ խոխովիւնն էր միայն լսուում և երևում էին ժայռերի ու բլուրների մշուշազդեստ ստուերները. իսկ վերեւ ձգուում էր հարաւի կայոյտ ու ջինջ երկնակամարս անհամար պայծառ փայլուն աստղերով անհուն անթափանցելի վեճ ու խորհրդաւոր... Ո՛ւր աւելի մօտ է մարդ Նրկնաւորին, քան մի այսպիսի միջավայրում. ո՛ւմ հօգին աւելի պատրաստ կլինէր և սիրտն աւելի ազատ Նորա յայտնութեան սքանչելի խորհուրդըն ընդգրկելու, քան այն կէս արթուն կէս երազի մէջ՝ Աստուծոյ ստեղծած բնութեան անարատ զրկում հանգոյ պարզ հովիւներին—Մի հովիւ էր հաւատոյ հայրն Արրահամ իւր հօր խաշներն էր արածեցնում խառանի անսպասում և միամիտ երկիւղածութեամբ աստղների լեզուն էր ուսումնասիրում երբ աստեղագարը երկինքը բացուեցաւ՝ այդ երկնքի Թաղաւորը խօսեց նորա հետ և ապագայի համար մեծ օրհնութիւն աւետեց: Հովիւ էր Մովսէս՝ աստուածային օրինաց թարգմանը. Բորիք լերան ամայի ըստորոտում իւր աներ Եթոբի հօտը նստեցրել էր խոր մտածմունքների մէջ էր ընկզմել իւր թշուառ ազգի շարչարանքներն էր մի առ մի միտը բերում և սրբազան լերան մութ խորշերին աչքը սեւեռած պատգամ էր հարցնում երբ երեւցնորան հայրերի Աստուածըն անկեղ մորնու մէջ և Խարայելի փրկութեան պատգամը առաւ: Հովիւ էր նաև այն հուժկու մարգարէն Ամսիս որ նոյն այս Եռուդայի լեռների մէջ մի թիթեռու տակ